

նիստում

ԵՊՀ ռեկտոր

Ա. Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

26 ապրիլի 2007 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՐԵՏԲՈՒՅԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը (այսուհետև՝ ՋԼԿՎ) Երևանի պետական համալսարանի (այսուհետև՝ ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:
- 1.2. ՋԼԿՎ-ն կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:
- 1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:
- 1.4. ՋԼԿՎ-ն ունի կնիք, դրոշմակնիք ու պաշտոնաթուղթ (բլանկ):

2. Խնդիրներն ու գործառույթները

ՋԼԿՎ-ի խնդիրներն են՝

- 2.1. Հետբուհական լրացուցիչ կրթության (այսուհետև՝ ՋԼԿ) ապահովում:
- 2.2. Դասախոսների որակավորման բարձրացում, վերապատրաստում և ստաժավորում:
- 2.3. Բարձրագույն կրթությամբ մասնագետների վերապատրաստում:
ՋԼԿՎ-ի գործառույթներն են՝
- 2.4. ՋԼԿ ծրագրերի իրականացում. ուսումնական գործընթացի պլանավորում և կազմակերպում:
- 2.5. Ունկնդրակազմի ձևավորում ըստ կրթական ծրագրերի և աստիճանների:
- 2.6. Ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում:
- 2.7. Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպում:

- 2.8. Դասատախտակների կազմում և ուսումնական գործընթացի ապահովում լսարանային ֆոնդով ու դասախոսական կազմով:
- 2.9. Ավարտական աշխատանքների պաշտպանության և քննական հանձնաժողովների աշխատանքի կազմակերպում:
- 2.10. Ունկնդիրների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում:
- 2.11. Ուսուցման որակի և արդյունավետության վերաբերյալ ունկնդիրների հարցումների կազմակերպում և վերլուծում:
- 2.12. Ունկնդիրների շարժի վերաբերյալ հրամանների նախապատրաստում և հաշվառում:
- 2.13. Ժամավճարային հիմունքով աշխատողների ձևակերպում և հաշվառում:
- 2.14. Ընթացիկ և տարեկան ծրագրերի ու հաշվետվությունների նախապատրաստում:
- 2.15. ՀԼԿ ծրագրերի, դասախոսների և ունկնդիրների վերաբերյալ տեղեկատվական համապարփակ բազայի ստեղծում, նորացում և վերլուծություն:
- 2.16. Ուսումնամեթոդական գրականության հրատարակում:
- 2.17. Վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում

3. Կառուցվածքը և կառավարումը

- 3.1. ՀԼԿ-ն անմիջականորեն ենթարկվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:
- 3.2. ՀԼԿ-ն կազմված է երկու՝ դասախոսների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման բաժիններից: ՀԼԿ-ի հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ռեկտորը:
- 3.3. ՀԼԿ-ն գլխավորում է պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ռեկտորը: ՀԼԿ-ի պետի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր, որը հիմք է հանդիսանում հրամանը ձևակերպելու համար:
- 3.4. ՀԼԿ-ի պետն իրականացնում է հետևյալ գործառույթները՝
 - ա) ՀԼԿ-ի կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարում,
 - բ) ռեկտորատում, գիտական և մեթոդական խորհուրդներում ՀԼԿ ծրագրերին վերաբերող հարցերի նախապատրաստում և ներկայացում,
 - գ) ֆակուլտետների և ամբիոնների կողմից ՀԼԿ ծրագրերով ուսումնական

գործընթացի կազմակերպմանը վերաբերող ԵՊՀ հրամանների և նորմատիվ

փաստաթղթերի կատարման վերահսկում,

դ) կրթական ծրագրերի նախահաշիվների և պայմանագրերի նախապատրաստում:

3.5. ՀԼԿՎ-ի պետը պատասխանատվություն է կրում ՀԼԿՎ-ի աշխատանքների որակի և ՀԼԿՎ-ի խնդիրների ու գործառույթների կատարման համար:

Հավելված

Երևանի պետական համալսարանի
հետբուհական լրացուցիչ կրթության վարչության
կառուցվածքը

